

ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի հունվարի 24-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի շրջանավարտների դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանություն՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետի:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և բազմաթիվ հրավիրյալներ:

Հանդիսությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսությունն սկսվեց առավոտյան ժամը 11-ին հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանի բացման խոսքով:

Այնուհետև քննիչ հանձնաժողովի նախագահ, հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը, հանուն քննիչ հանձնաժողովի, որի կազմում էին պատմական գիտությունների դոկտոր Սիմոն Գրքյաշարյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Պետրոս Բեդիրյանը և բանասիրական գիտությունների թեկնածու Արտաշես Մաթևոսյանը, ներկաներին ներկայացրեց հանձնաժողովի եզրակացությունները գրավոր աշխատանքների վերաբերյալ:

Ապա իրենց դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանությամբ հանդես եկան Գարուշ սարկավագ Լապարյանը և Կառլեն սարկավագ Պետրոսյանը:

1.—**Գարուշ սարկավագ Լապարյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝

«Հայ Եկեղեցու պատմությունը Դ դարի առաջին կեսին»:

Աշխատությունը բաղկացած էր 75 մեքենագիր էջից և ուներ հետևյալ գլուխները՝

ա) Հայաստանի քաղաքական դրությունը Դ դարի առաջին կեսին.

բ) Հայաստանում քրիստոնեությունը պաշտոնական կրոն հռչակելու նախադրյալները.

գ) Ս. Գրիգոր Լուսավորչի կյանքն ու գործունեությունը մինչև հայոց դարձը.

դ) Հայոց դարձը և Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը.

ե) Հայոց Եկեղեցին Ս. Գրիգոր Լուսավորչի օրոք:

Ներկայացված գրավոր ավարտաճառը գնահատվեց «լավ», նրա բանավոր պաշտպանությունը՝ «գերազանց»: Ընդհանուր միջինը՝ «գերազանց»:

2.—**Կառլեն սարկավագ Պետրոսյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝

«Եսայի Նչեցու մատենագրական վաստակը»:

Աշխատությունը բաղկացած էր 71 մեքենագիր էջից և ուներ հետևյալ գլուխները.

ա) Համառոտ ակնարկ՝ Եսայի Նչեցու կյանքի և գործունեության վրա.

բ) Եսայի Նչեցու մատենագրական վաստակը.

գ) Եսայի Նչեցու թղթերը.

դ) Հավելված (բնագրեր):

Ներկայացված գրավոր ավարտաճառը գնահատվեց «լավ», նրա բանավոր պաշտպանությունը՝ «լավ», ընդհանուր միջինը՝ «լավ»:

Հանդիսության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը Իր հայրական օրհնությունը տվեց դիպլոմների արժանացած շրջանավարտներին և ըստ արժանվույն գնահատեց կատարված աշխատանքները:

Այնուհետև վերջիններս ներկաների ծափահարությունների ներքո Վեհափառ Հայրապետից աջահամբույրով ստացան իրենց ավարտական վկայականները և նվերներ:

Հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին արտասանված «Հայր մեր»-ով: